


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

## Յիսուսի ծնունդը



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Story 36 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)


*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Երկար ժամանակ  
առաջ Աստուած Գաբրիէլ  
հրեշտակը դրկեց ազնիւ  
հրեայ երիտասարդ կոյս  
աղջկայ մը քով, որ կը  
կոչուէր Մարիամ:



1

Հրեշտակը ըսաւ անոր, "Դուն  
տղայ գաւակ մը պիտի ունենաս  
եւ պիտի կոչես Յիսուս: Ան պիտի  
կոչուի որդին ամենաբարձրին:  
Ան պիտի իշխէ յաւիտեան":



2

"Ինչպես կրնայ ըլլալ ասիկա",  
ապշած հարցուց իրեն  
կոյս աղջիկը: "Տակաւին  
տղամարդու հետ չեմ  
եղած": Հրեշտակը  
ըսաւ Մարիամին,  
որ "մանուկը պիտի  
գայ Աստուծմէ եւ  
երկրաւոր հայր  
պիտի չունենայ":



3

Ետքը հրեշտակը ըսաւ Մարիամին, որ  
իր հօրեղբօր աղջիկը Էլիզապէթը որդի  
մը կ'ունենայ իր ծեր  
տարիքին: Ասիկա  
արդէն հրաշք մըն  
էր: Մարիամի  
հանդիպումէն  
ետք Էլիզապէթին  
երկուքը մէկ  
փառաբանեցին  
Աստուծոյ:



4

Մարիամ կը  
պատրաստուէր  
ամուսնանալու  
Յովսէփ կոչուող  
երիտասարդի  
մը հետ, Յովսէփ  
շատ տխրեցաւ,  
երբ լսեց, թէ  
գաւակ մը կը  
սպասէ: Ան  
կարծեց,  
թէ ուրիշ  
երիտասարդ  
մըն էր անոր  
հայրը:




5

Երագի մէջ Աստուծոյ հրեշտակը  
ըսաւ Յովսէփին, թէ այս պզտիկը  
Աստուծոյ որդին է: Յովսէփ պիտի  
օգնէր Մարիամին մեծցնելու  
համար Յիսուսը:



6

Յովսէփ վստահեցաւ եւ հնազանդեցաւ  
Աստուծոյ: Ան նաեւ  
հնազանդեցաւ իր  
երկրին օրուայ  
օրէնքներուն:




7

Նոր օրէնքին համաձայն  
ինք եւ Մարիամ հեռացաւ  
իրենց մայր քաղաքէն  
Բեթղեհեմէն, որպէսզի  
վճարեն իրենց  
տուրքը:



8



Մարիամ պատրաստ էր ծննդաբերելու իր մանուկը, սակայն Յովսեփի չէր կրնար պարապ սենեակ մը գտնել: Բոլոր պանդոկները

լեցուն էին:

9



Վերջապես Յովսեփի գտավ ախոռ մը: Հոն Յիսուս Մանուկը ծնավ: Անոր մայրը իր քովը դրավ մանուկը ամանին մէջ, ուր գետեղուած էր անասուններուն ուտելիքները:

10



Մօտերը հովիւներ իրենց հօտերը կը հսկէին: Աստուծոյ հրեշտակը երեւցաւ եւ հրաշալի լուրը տուաւ անոնց:

11



"Այսօր ձեզի ծնաւ փրկիչ Դաւիթի քաղաքին մէջ, որ ինքը Զրիստոսն է: Մանուկը պիտի գտնէք մսուրին մէջ":

12



Յանկարծ գանազան լուսաւոր հրեշտակներ երեւցան փառաբանելով Աստուծոյ եւ արտասանելով "փառք Աստուծոյ եւ

խաղաղութիւն աշխարհին", ...

13



... Ամենաբարձրին լաւութիւնը մարդոց հանդէպ:


14

Հովիւները շուտով ասոռ շտապեցին: Մանուկը տեսնելէ ետք, հրեշտակներուն տուած լուռը տարածեցին Յիսուսի մասին:



15

Ութը օր ետք Յովսէփ եւ Մարիամ Յիուսը բերին Երուսաղէմի տաճարը: Հոն Սիմոն անունով մարդ մը կար, որ Աստուծոյ կը փառաբաներ մանուկին համար, անդին ծեր Աննան ուրիշ ծառայ Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտներ:



16

Երկուքն ալ գիտէին, որ Յիսուս որդին է Աստուծոյ, խոստացուած Փրկիչը: Յովսէփ երկու թռչուն իբր զոհ մատուցանեց: Այս էր մատուցումը Աստուծոյ օրէնքին համաձայն, երբ աղքատ ընտանիք մը իրենց խոր ծնեալ զաւակը ներկայացուցին Աստուծոյ:



17


Ժամանակ մը ետք, յատուկ աստղ մը, Արեւելքէն խոհեմ մարդիկը առաջնորդեց դէպի



18


Երուսաղէմ. "Ո՞ր է Ան, հրեաներուն թագաւորը, որ ծնաւ", հարցուցին անոնք "մենք կ'ուզենք պաշտել զայն":

Harold թագաւոր լսեց այս խոհեմ մարդոց մասին, փորձանքի մէջ գտնուած, անոնցմէ խնդրեց, որ ցոյց տան Յիսուսի տեղը: "Ես ալ կ'ուզեմ զայն պաշտել", ըսաւ Հերովդէս. Բայց ան սուտ կը խօսեր: Harold կ'ուզէր մեռցնել Յիսուսը:




19

Աստղը խոհեմ մարդիկը (Մագերուն) առաջնորդեց Մարիամի եւ Յովսէփի տեղը ուր Յիսուս Մանուկը կը գտնուէր: Անոնք ծնկաչոք պաշտեցին եւ Յիսուսի թանկագին ոսկիէ եւ անուշ հոտերէ նուէրներ տուին:



20

Աստուած  
զգուշացուց խոհեմ  
մարդոց (Մոգերուն), որ  
գաղտնի տուն դառնան:  
Յերովդէս շատ շուարած  
եւ գայրացած էր:




21

Ան որոշած էր մեռցնել  
Յիսուսը, ոճրագործ  
կառավարիչը Բեթղէեմի  
ամեն մանուկ տղաները  
մեռցուց:



22

Սակայն Յերովդէս չկրցաւ  
վնաս հասցնել Աստուծոյ  
որդիին. երազին  
մէջ զգուշացուած  
Յովսէփ անաւ  
Մարիամը եւ Յիսուս  
ապաւեն գտնելով  
Եգիպտոս:



23

Heroldի մահէն ետք  
Յովսէփ Մարիամը  
եւ Յիսուսը  
Եգիպտոսէն  
վերադարձուց:



Անոնք ապրեցան  
պզտիկ քաղաքի մը մէջ, որ կը  
կոչուէր Նազարէթ, Կալիլիէ ծովուն մօտ:

24

**Յիսուսի ծնունդը**

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 1-2, Դուկաս 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Մաղմուս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք  
մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած  
այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,  
որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար  
պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը  
բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը  
պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար,  
Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեզդ կը բնակի իսկ  
դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր  
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար  
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ  
կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՛ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի  
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16